ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2017

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԵՎ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 6

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *հ*.**

1) արհամար-ել, հայթ-այթել, խոնար-, ընդ-անուր
2) քամա-րել, նշխար-, սուր-անդակ, ընդ-ուպ
3) նախագա-, ար-ավիրք, հոպ-ոպ, շնոր-ք
4) աշխար-իկ, խոր-ուրդ, հեղ-եղուկ, շնոր-ել

2 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *ի*.**

1) Նապոլ-ն, ռադ-, ակորդ-ն, արդ-ք
2) ամբ-ն, թ-րեմ, միլ-ն, Տոկ-
3) լեգ-ն, Բյուզանդ-ն, գիլ-տին, մարմար-ն
4) բրաբ-ն, հետ-տն, մեդալ-ն, տրիլ-ն

3 **Շարքերից քանիսո՞ւմ ուղղագրական սխալ կա.**

- հապշտապ, ջրարբի, սփրթնել, հուսախաբ
- անոթ, բացօթյա, նախորոք, հօդս ցնդել
- խոչընդոտ, ակնթարթ, մթնկա, ինքնըստինքյան
- խարխաբել, քամելեոն, շրջագայություն, օձիք

1) ոչ մեկում
2) մեկում
3) երկուսում
4) երեքում

4 **Ո՞ր շարքի բառերի և բառաձևերի բոլոր վանկերն են բաց.**

1) նշանացի, նորատի, ճրագակալի, նորոգելու
2) նավաստի, նեղանալու, նպարեղենի, շահամոլի
3) նիհարելու, նռնաքարե, շարունակելի, հայեցի
4) շաքարաջրի, շաղափելու, ողորմելի, հեռանայի

5 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ.**

1) քամահրել, վատաբանել, դժգոհել, նախատել
2) չարախոսել, բամբասել, զրպարտել, կեղեքել
3) պաղատել, թախանձել, խնդրել, աղաչել
4) պատատուկ, պատնեշ, պարիսպ, պատ

6 **Ո՞ր շարքի *ոչ* բոլոր բառազույգերն են կազմված հականիշներից:**

1) պատվարժան-անարգ, գեղատեսիլ-անհրապույր, եղեմ-դժոխք
2) վճիտ-պղտոր, նենգ-ժպտադեմ, հնարամիտ-անճար
3) համերաշխ-գժտված, առինքնող-վանող, օրինաչափ-պատահական
4) պիղծ-սուրբ, գաճաճ-բարձրահասակ, ջրարբի-անջրդի

7 **Ո՞ր տարբերակում բառի սխալ բացատրություն *չկա:***

1) **աղանդ** – տվյալ եկեղեցու դավանանքից շեղվող ուսմունք, **արոր** – հող հերկելու գործիք
2) **վարուժան** – արու թռչուն, **շառափ** – կտրող գործիք
3) **մորի** – մորենու պտուղը, **դիպակ** – որևէ ստեղծագործության հատված
4) **աղորիք** – հացահատիկ աղալու մեքենա, **նյութել** – որևէ դավանության հետևել

8 **Ո՞ր տարբերակում են ճիշտ համապատասխանում տրված բառերն ու դրանց բացատրությունները:**

ա. տատասկ	1. տաք քամի
բ. հյուլե	2. զանազան ծաղիկներից ստացվող բուժիչ հյութ
գ. սկահակ	3. փշոտ տերևներով խոտաբույս
դ. բալասան	4. նվազագույն մասնիկ
ե. խորշակ	

1) ա-3, գ-1, դ-2, ե-3
2) ա-2, բ-1, դ-4, ե-3
3) ա-2, բ-1, գ-3, ե-1
4) ա-3, բ-4, դ-2, ե-1

9 **Ո՞ր շարքում հոգնակի թվի կազմության սխալ կա:**

1) փայտահատներ, ընչացքներ, վերնախավեր, գինեգործներ
2) գրաշարներ, երկրապահներ, պատճեններ, շարասյուներ
3) համերգավարներ, ոտնաձայներ, ճարտասաններ, այտոսկրեր
4) քարայրեր, ուղեծրեր, սկիզբեր, հանցապարտներ

10 **Ո՞ր նախադասության մեջ դիմորոշ հոդի գործածություն կա:**

1) Վռազ անցան երազ, մուրազ, ու չհասա ոչ մեկին,
   Կյանքս թեթև տանուլ տված գրազ եղավ, անց կացավ:
2) Հե՜յ ագահ մարդ, հե՜յ անգոհ մարդ, միտքդ երկար, կյանքդ կարճ….
3) Աշխարումս ախ չիմ քաշի, քանի վուր ջա՛ն իս ինձ ամա….
4) Ծերուկ զինվորս քեզ կասեմ մի բան. հողն է քո ուժը, ոչ թե սին ոսկին:

11 **Ո՞ր նախադասության մեջ անկանոն բայ *չկա:***

1) Երբ նա ճանապարհվում էր Ռուսաստան, իմ գործերը բազմապատկվում էին, և ես դառնում էի լիակատար կառավարիչ:
2) Կիրակի երեկոները Մակար աղան սովորություն ուներ եկեղեցու ջահերից մեկը վառելու, եկեղեցու դռանը կանգնելու և աղքատների ձեռքին մի-մի սև փող դնելու:
3) Ինձ թվում էր, որ նա այդ ժամանակ թեթևություն էր զգում. կարծես ուսերից ընկնում էր մի ահագին ծանրություն:
4) Կարելի է ասել, որ խանութում կամ տանը նրան ուրախ տրամադրության մեջ կհանդիպեիր միայն այն ժամանակ, երբ առևտուրը հաջող էր անցել:

12 **Ո՞ր շարքի բոլոր բայերն են սոսկածանցավոր:**

1) երկնչել, սառչել, հզորացած, պարծեցել
2) կմտնենք, հագել է, ունեցած, կանգնել
3) օտարացած, հանգավ, կառչելու, դիպել է
4) համընկնել, փախչել, պրծնել, մոտենալ

13 **Ո՞ր նախադասության ընդգծված բառը մակբայ *չէ:***

1) Ամիսներ շարունակ նա փնտրում էր իր կորցրած հեծանիվը, մինչև **վերջնականապես** համոզվեց, որ գտնելու ոչ մի հույս չկա:
2) Գիշերը **մշտապես** հավաքվում են գյուղի կատուները, և նրանցով կարելի է հաշվել, թե քանի ծուխ ունի Անտառամեջ գյուղի տերտերը:
3) Իսպաներենն ու պորտուգալերենը **հիմնավորապես** սովորել-յուրացնելուց հետո նա անցավ արևելյան լեզուների ուսումնասիրությանը:
4) Կարտոֆիլը հետիոտն զառիվերը բարձրացնելը **իսկապես** անմտություն է, որովհետև զառիվերի գլխին կարտոֆիլ կա ցանված:

14 **Ո՞ր նախադասությունն է բարդ:**

1) Ուշ երեկոյան տուն վերադառնալուց հետո պառկեց անկողնու վրա:
2) Ծիծաղող Սոնան նստել է առվի եզրին՝ ոտքերը դրած ջրի մեջ:
3) Դուրսը՝ աշնան արևի մեջ, մի ծիտ գտել էր մի հատիկ սալոր և կտցահարում էր՝ հրճվանքից պայթելով:
4) Բաց սարերի, բացատավոր անտառների, արևոտ լանջերի, աշնան մաքուր արևի տակ ելևէջող մեր հին երկրի պատկերի առջև իմ սիրտը բացվեց:

15 **Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ կա:**

1) Դեպի երկի՜նք պիտի գնամ, դեպի եզերքը Ամենտի:
2) Սիրո հակառակն ամենևին էլ չսիրելը չէ:
3) Ա՜նց եմ կենում հիմա օտար քաղաքների ճանապարհով:
4) Եվ լույսը բացվեց, քարը պար եկավ:

16 **Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը հանգման անուղղակի խնդիր:**

1) **Բոլորին** սիրում էր անխտիր:
2) Հետո իր **հարազատներին** այլևս չտեսավ:
3) Երեկոյան թերթում էր օրվա **մամուլը:**
4) Ռուբենն այդպես էլ չհասավ **ոչ մեկին…**

17 **Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

Երբ գրկում էի նրան՝ այդ նազելի էակին, և նայում լեռնային աղբյուրների նման նրա վճիտ աչուկների մեջ, տեսնում էի, որ այնտեղ մի թախծալի, երազուն կարոտ կա:

1) 

2) 

3) 

4) 

18 **Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:**

1) Ամեն ոք ցանկանում էր հնարավորինս շատ տեղեկություն ստանալ:
2) Ո՛չ Սմբատը, ո՛չ մյուս որդիները իրավունք չունեին իրենց բաժին ժառանգությանը տիրանալու, եթե չկատարեին հոր պատվիրանները:
3) Շիրվանզադեի պարթև հասակը, հպարտ կեցվածքը այդ վայրկյանին մի տեսակ անշուք թվաց:
4) Սարդարապատում հայ ժողովուրդը միասնական պայքարի դուրս եկավ:

19 **Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

- Ես առողջությունս չեմ կորցրել, ոչ էլ կարողությունս, - պատասխանում է ձեզ վաճառականը և ավելացնում է, - այսօր համբերեք, վաղը կպատմեմ, և ամեն ինչ կիմանաք:

1) Վաճառականը պատասխանում է ձեզ ու ավելացնում, որ ինքը իր առողջությունը չի կորցրել, ոչ էլ իր կարողությունը, որ այսօր համբերեք, վաղը կպատմի, և ամեն ինչ կիմանաք:
2) Վաճառականը պատասխանում է ձեզ, որ ինքը իր առողջությունը չի կորցրել, ոչ էլ իր կարողությունը, և ավելացնում է, որ այսօր համբերեք, վաղը կպատմի, և ամեն ինչ կիմանաք:
3) Վաճառականը պատասխանում է ձեզ, որ նա իր առողջությունը չի կորցրել, ոչ էլ իր կարողությունը, և ավելացնում է, որ այսօր համբերեք, վաղը կպատմի, և ամեն ինչ կիմանանք:
4) Վաճառականը պատասխանում է ձեզ, որ ինքն իր առողջությունը չի կորցրել, ոչ էլ իր կարողությունը, և ավելացնում է, որ այսօր համբերենք, վաղը կպատմի, և ամեն ինչ կիմանաք:

20 **Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ *չկա:***

1) Անկողնում պառկած՝ կարդում եմ, և գրքի էջերից ինչ-որ միտք հիշեցնում է ինձ իմ մորը՝ վաղուց աշխարհից հեռացած և օտար ափերում դեգերող եղբորս:
2) Լինելով չափից դուրս անմիջական բնավորության տեր, ունենալով զգայուն հոգի՝ աղջիկը չէր կարողանում կեղծել իրեն, և նստել էր՝ ատամներն իրար սեղմած, տխուր:
3) Բայց մի քանի րոպե չանցած՝ կանգ առավ սարսափած. նրան թվաց, թե երկու կին, թև թևի տված, շտապում են հասնել իրեն:
4) Աղջիկը հեռանում է՝ բարակ մեջքը թեքած կժի ծանրության կողմը, ու թվում է՝ նրա ուսերն անզոր են պահելու այդ ծանր կուժը՝ աղջկական երազներով ու հույզերով լցված:

21 **Բառերի և բառակապակցությունների տեղադրման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

«Թէպէտ եւ եմք ածու փոքր եւ թուով յոյժ ընդ փոքու …….. եւ ……. եւ ընդ այլով յոլով անգամ …… թագաւորութեամբ, սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս եւ ……»:

(1. արժանի գրոց հիշատակի, 2. զօրութեամբ տկար, 3. սահմանեալ, 4. նուաճեալ)

1) 4, 2, 3, 1
2) 4, 1, 3, 2
3) 3, 2, 4, 1
4) 1, 2, 3, 4

22 **Ո՞ր շարքի բոլոր գրողներն են ստեղծագործել 19-րդ դարում:**

1) Հովհ. Թումանյան, Նար-Դոս, Գ. Մահարի
2) Սայաթ-Նովա, Խ. Աբովյան, Ռաֆֆի
3) Հ. Պարոնյան, Մ. Նալբանդյան, Պ. Դուրյան
4) Մուրացան, Ալ. Շիրվանզադե, Ակ. Բակունց

23 **Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» պատմավեպի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ:**

1) Աշոտ Երկաթը սիրել էր Ասպրամին, բայց պետական շահի թելադրանքով ամուսնացել Սահականույշի հետ:
2) Ասպրամի ինքնասպանությունից հետո Ցլիկ Ամրամը հեռանում է հայրենիքից:
3) Գևորգ Մարզպետունին չի ընդունում Աշոտ Երկաթի վարքագիծը, բայց ծառայում է նրան որպես երկրի թագավորի:
4) Թագուհուն թագավորի հետ հաշտեցնելու, ապստամբ բոլոր իշխաններին դարձի բերելու Գևորգ Մարզպետունու բոլոր ջանքերը պսակվում են հաջողությամբ:

24 **Տողերի դասավորության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

ա. Ձիս կը պահես դողդողալով
բ. Դարձյալ խորքիդ մեջ խըռով
գ. Ձի թ՚հովե մ՚ալ խորշոմիս
դ. Լըճա՛կ, դու ես թագուհիս

1) գ, դ, բ, ա
2) դ, գ, բ, ա
3) ա, բ, գ, դ
4) ա, բ, դ, գ

25 **Ո՞ր պնդումն է սխալ Ռաֆֆու «Սամվել» պատմավեպի հերոս Մերուժան Արծրունու վերաբերյալ:**

1) Դավաճան Մերուժանին ներում է միայն մայրը, երբ որդուն դարձի բերելու անհաջող պատգամախոսությունից վերադարձածները հայտնում են, որ նա հիվանդ է:
2) Մերուժան Արծրունին թագավորական գահին է ձգտում նաև պարսից արքայի քրոջ՝ Որմիզդուխտի սիրուն արժանանալու համար:
3) Հարազատ ընտանիքը երես է թեքում Մերուժան Արծրունուց՝ ապարանքի մուտքի դռները փակելով նրա առաջ:
4) Մերուժանը մերժվում է Որմիզդուխտից՝ արժանանալով նրա արհամարհանքին:

26 **Ո՞ր շարքում են միայն Միքայել Նալբանդյանի երկերը:**

1) «Իտալացի աղջկա երգը», «Մանկության օրեր», «Ապոլլոնին», «Վազող ջրին»
2) «Ոսկեհանդերձ եկար», «Ազատություն», «Երկու տող», «Մանկության օրեր»
3) «Ազատություն», «Երկու տող», «Մանկության օրեր», «Ասպետի սերը»
4) «Ազատություն», «Կարծես թե դարձել եմ ես տուն», «Մանկության օրեր», «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ»

27 **Ի՞նչ ավարտ է ունենում Նար-Դոսի «Նեղ օրերից մեկը» պատմվածքը:**

1) Պատրիկյանը լրագրի քարտուղարից պարտքով հինգ ռուբլի է վերցնում՝ բնակարանի վարձը վճարելու համար:
2) Պատրիկյանը, չկարողանալով վճարել բնակարանի վարձը, հեռանում է քաղաքից:
3) Գրախանութներում վաճառված իր գրքերի փողով Պատրիկյանը շտկում է նյութական վիճակը և շարունակում մնալ և աշխատել քաղաքում:
4) Հուսահատության ծայրակետին հասած Պատրիկյանը շարունակում է ապրել ծանր պայմաններում:

28 **Ո՞ր պնդումը ճիշտ չէ Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի «Հառաջաբանի» վերաբերյալ:**

1) Աբովյանը խոսում է ժողովրդին հոգեհարազատ թեմաներով գրելու անհրաժեշ–տության մասին:
2) Աբովյանը խոսում է աշխարհաբարով գրելու անհրաժեշտության մասին:
3) Աբովյանը համաձայն է այն կարծիքին, որ մեր ազգը ուսումնասեր չէ, և կարդալը նրա համար արժեք չունի:
4) Աբովյանը բարձր է գնահատում գրաբարը՝ իբրև կատարյալ և անթերի լեզու:

29 **Բանաստեղծական ո՞ր հատվածը Վահան Տերյանի «Երկիր Նաիրի» շարքի որ բանաստեղծությունից է:**

ա. «Իջնում է գիշերն անգութ ու մթին…»
բ. «Մի՛ խառնեք մեզ….»
գ. «Կարծես թե դարձել եմ ես տուն…»
դ. «Մի՞թե վերջին պոետն եմ ես…»

1. Վտարանդի, երկրում աղոտ,
Լուսե՜ղ, քեզ եմ երազում,
Եվ հնչում է, որպես աղոթք,
Արքայական քո լեզուն:
2. Ամրակուռ է մեր հոգին - դարերի զավակ՝
Շատ է տեսել մեր սիրտը ավեր ու կրակ:
3. Թող կիտվի խավարն ավելի խրթին,
Եվ չարխինդ ճնշե հողն իմ արյունոտ,
Ու թող գա, թե կա, ավելի՛ չար բոթ,
Մեխվի զոհ-երկրիս անարգված սրտին:
4. Մանում ու հեքիաթ ես ասում,
Մանում ես անվերջ ու արագ.
Սիրում եմ պարզկա քո լեզուն,
Ձեռներդդ մաշված ու բարակ:

1) ա-2, բ-4, գ-1, դ-3
2) ա-3, բ-2, գ-1, դ-4
3) ա-1, բ-3, գ-4, դ-2
4) ա-3, բ-2, գ-4, դ-1

30 **Նշել բանաստեղծական տողերի ճիշտ հաջորդականության տարբերակը:**

ա. Փափագ սրրտով խընդիրք արել
բ. Ջուրն ու ծաղիկ աստղունք դրրել
գ. Կույս սափորով, լուռ ու մունջ
դ. Բարի ժրպտան իր սերին
ե. Օխտն աղբյուրից ջուր է առել
զ. Կապել սիրո ծաղկեփունջ
է. Խընդիրք արել աստղերին
ը. Օխտը ծաղկից ծաղիկ քաղել

1) ե, գ, ը, զ, բ, է, ա, դ
2) ե, գ, ա, դ, ը, բ, է, զ
3) բ, է, ե, դ, ը, ա, գ, զ
4) ը, զ, բ, դ, ա, ե, է, գ

31 **Պնդումներից ո՞րն է սխալ Հրանտ Մաթևոսյանի «Աշնան արև» վիպակի վերաբերյալ:**

1) Աղունը լեզվանի է, Սիմոնը՝ լռակյաց, Աղունն անհանգիստ բնավորություն ունի, Սիմոնը՝ հանգիստ, դանդաղաշարժ և անճարակ:
2) Վիպակում գործողությունները ծավալվում են Հայրենական մեծ պատերազմի, նրան նախորդող և հաջորդող տարիներին:
3) Աղունը և Սիմոնը մեծացել են միասին, և ի վերջո նրանց մանկական մտերմությունը փոխվել է սիրո:
4) Աղունի բոլոր ձեռքբերումները իրականություն են դարձել համառ կամքի ու տոկունության շնորհիվ:

32 **Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը *չի* գործածվել:**

Գոռում են, դողում Թրմկա ձորերը,
Կանգնած է Թաթուլ Շահի հանդիման.
Զարկում են, զարկվում դուշման զորքերը,
Արյունը հոսում էն Քրոի նման:

1) շրջադասություն
2) համեմատություն
3) չափազանցություն
4) մակդիր

33 **Տրված բառաշարքերից քանիսո՞ւմ *յա* երկհնչյունի հնչյունափոխություն կա.**

- վերջնական, առաքելական, առօրյա, հավիտենական
- այժմեական, մշտնջենական, որդիական, տնայնագործ
- կատարելագործել, ոսպեական, վայրկյան, գոյական
- դշխոյական, ջղայնանալ, ստորոգելիական, մարմնական

34 **Հոմանիշների քանի՞ եռյակ կարող է կազմվել տրված բառացանկից.**

անզուգական, առհավատչյա, լեզվագար, անընտգյուտ, զեխ, անխռով, երաշխիք, կատաղի, հեղգ, աննման, գրավական, շատախոս:

35 **Տրված հատվածում ընդգծվածներից քանի՞սն են գոյական:**

Մեր **հոյակապ** հին վանքերի **մութ** խուցերում, **մենության** մեջ
Պատմիչները մեր վշտահար, մեղմ **կանթեղի լույսով** անշեջ,
Մի **նշխարով**, մի կում ջրով և ճգնությամբ գիշերն անքուն,
Պատմությունը մեր գրեցին մագաղաթի վրա **դժգույն**՝
Եղեռնները, նախճիրները **հորդաների** արյունռուշտ,
Փլուզումը հայրենիքի և **ոսոխի** սուրը անկուշտ:

36 **Բարդ ստորադասական նախադասություններից քանիսու՞մ ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն կա:**

- Ես չգիտեմ՝ ուր են տանում հեռավոր
  Ուղիների ժապավեններն անհամար…
- Չեմ սիրում, երբ թիկունքիս հետևից օտարն իմ նամակն է կարդում:
- Զգացվում է, որ շուտով ցրտերն ընկնելու են:
- Ա՜խ, արդյոք ու՞ր է այն ձեռքը սուրբ,
  Որ պիտի ցմահ փայփայե ինձ…

37 **Նախադասություններից քանիսո՞ւմ մեկից ավելի բուք պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- Հիշեց սպարապետի Հայոց աշխարհի պաշտպանության մասին հրամանն ու պատվերները Տիզբոն գնալուց առաջ:
- Մի պահ Ատոմը կարկամեց անակնկալ էր այս ամենը չտեսնված չլսված անակնկալ և անկարող եղավ միանգամից ըմբռնել ինչ կատարվեց իր աչքերի առջև:
- Երկիրը տագնապի մեջ էր և ինքը Գնունյաց իշխանը պատասխանատու լինելով երկրի առջև արձակեց երկիրը պաշտպանելու իր հրամանը:
- Մինչ Արծվին կպատասխաներ երկրորդ նետը սուրաց պարզ էր նետաձիգը հեղեղատի մյուս ափին էր իրենց դեմ դիմաց:
- Փախչողի նժույգը արագոտն ու կատաղի ճարպկորեն թոցնելով հեծյալին վերջապես հասավ Արծվիի նժույգին:

38 **Տրվածներից քանի՞սն են ճիշտ Դանիել Վարուժանի ստեղծագործությունների վերաբերյալ:**

- Դանիել Վարուժանի առաջին բանաստեղծական ժողովածուն «Սարսուռներն» է:
- Դանիել Վարուժանի «Հարճը» պոեմի հերոսուհին անանուն է:
- Բանաստեղծը «Հացին երգում» հացի արարման գործընթացին զուգահեռ ներկայացնում է նաև արևմտահայ գյուղի ծանր վիճակը:
- «Ցեղին սիրտը» ժողովածուում բանաստեղծը արձագանքել է 1915 թ. եղեռնի ողբերգությանը:

39 **Նշել այն բառերի համարները, որոնցում հնչյունափոխություն կա.**

1. գահավեժ, 2. գազալցակայան, 3. վարդազգի, 4. տարկետում, 5. խոսափող, 6. բազպան, 7. զեկույց, 8. անզգուշաբար, 9. զինապահեստ:

40 **Նշել այն համարները, որոնց դիմաց գրված դարձվածքներն իրար հականիշ են:**

1. մի ծաղկով գարուն չի գա – մի ձեռքը ծափ չի տա
2. գետն ամեն անգամ գերան չի բերի – պապն ամեն անգամ գաթա չի ուտի
3. ձվից նոր դուրս եկած – ընկած-ելած
4. քսակի բերանը բանալ – քոռ կոպեկ չտալ

41 **Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ըղձական եղանակի բայաձև *չկա:***

1. Տուն կանչի մորս ձայնը իրիկվան,
   Չպոկեմ սարից աչքս կարոտած:
2. Շանթն է բեկվում ճակտիս վրա,
   Մահ չգիտեմ՝ կա՞, թե՞ չկա:
3. Գիտեմ, որ մի օր կմեռնեմ ես էլ…
4. Ինչքան էլ սու՜ր սիրտս խոցեն արյունաքամ վերքերը մեր,
   Էլի ես որբ ու արնավառ իմ Հայաստան-յարն եմ սիրում:
5. Չէ՞ որ նա գիտեր, թե ում է ծնել…
6. Երկրի մեջ մարդ չմնաց՝
   Մարդ թաղեր մարդու նման…

42 **Նշել այն նախադասությունների համարները, որոնցում սխալ բայաձև կա:**

1. Շուտով հայերը տնկեցին թթենի, նռնենի, նշենի, աճեցրին մրգեր ու բանջարեղեն և ցանեցին տեսակ-տեսակ կանաչիներ:
2. Իզուր մի՛ մտահոգվիր. քեզ թողող չկա, որ կեսգիշերին տուն գնաս:
3. Զվարճալին այն է, որ հաճախ բախտը չարիքից փախչող մահկանացուին հենց նրա փախուստի ճանապարհին է բերում, հանդիպացնում այն նույն չարիքին, որից նա խուսափում էր:
4. Հենց նորություն ունենամ, կկապնվեմ քեզ հետ և կհայտնեմ մանրամասները:

43 **Նշել այն հատվածների համարները, որոնցում ստորոգյալի տեսակը սխալ է նշված:**

1. Այստեղ է լացել իմ մայրը
   Մորմոքն իր և իր օրորը: *(պարզ ստորոգյալ)*
2. Նա ուներ խորունկ, երկնագույն աչքեր,
   Քնքուշ ու տրտում որպես իրիկուն: *(պարզ ստորոգյալ)*
3. Քնքուշ երազով պաճուճի՛ր հոգիս,
   Նստի՛ր մահճիս մոտ ու տխուր երգի՛ր: *(պարզ ստորոգյալ)*
4. Թո՛ղ որսդ, արի՛, քաջասի՛րտ բազե: *(բաղադրյալ ստորոգյալ)*
5. Ես տառապանքս բախտ եմ համարում: *(պարզ ստորոգյալ)*
6. Ամենուրեք մի կարոտ ես դու նետել,
   Քո ստվերն ես փռել անծիր աշխարհում: *(բաղադրյալ ստորոգյալ)*

44 **Նշել թվերի այն հերթականությունը, որը համապատասխանում է պարբերությունների տրամաբանական հաջորդականությանը:**

1. Մի օր, երբ օրիորդը ուղեկցող խմբով անցնում էր մի ապառաժոտ վայրով, հանկարծ երկնակարկառ քարաժայռի գլխից նրա վրա հարձակվեցին զինյալներ: Եվ որպեսզի չընկնի գայլաբար այլազգիների ձեռքը, որոնք Շահանդուխտի հռչակված գեղեց–կության պատճառով կամենում էին նրան հափշտակել, օրիորդը խաչակնքում է ու ձիու հետ թռչում քարաժայռից:
2. Իշխանադուստր Շահանդուխտը ձորում մի մատուռ է կառուցել տալիս, որտեղ ապաշխարելով ապրում է մինչև կյանքի վերջը, իսկ ժայռը կոչվում է Շահանդուխտի ժայռ:
3. Շահանդուխտը՝ իշխանի դուստրը, հրաշագեղ էր, չքնաղ. նրա գեղեցկությունը զարմանք էր պատճառում տեսնողներին: Նայողին թվում էր՝ նյութեղեն չէ, այլ կարծես կերտված է լիալուսնի նրբանուրբ շողերից, արևի թրթռուն ճառագայթներից ու ծաղիկների անուշաբույր նեկտարից:
4. Քամու ուժգին հոսանքով ու աներևույթ զորությամբ նա, իր ձիու վրա նստած, անվնաս իջնում է ձորի խորխորատը:

45 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Բառավերջի վանկում երկհնչյուն ունեցող բոլոր բառերը ներքին հոլովման են:
2. Բոլոր գոյականների հոգնակիները պատկանում են *ի* հոլովման:
3. *Ող* հոլովման ենթարկվող բառերի մի մասը կարող է հոլովվել նաև *ան* հոլովմամբ:
4. *Ան* հոլովման ենթարկվող բառերից մի քանիսը կարող են հոլովվել նաև *վա* հոլովմամբ:
5. *Ան* հոլովման ենթարկվող բոլոր բառերը կարող են հոլովվել նաև *ի* հոլովմամբ:
6. *Ց* հոլովման ենթարկվող բառերը որևէ այլ հոլովմամբ չեն կարող հոլովվել:

Բ մակարդակ

46 **Համարակալված բառերում բաց թողած տառերը (տառակապակցությունները) պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:**

Ասում են՝ հարյուրավոր տարիներ առաջ մի աշխարհ կար՝ տա-ագույն (1) ծաղիկներով, թ-թռուն (2) ու ոսկեթև թիթեռներով, թ-վռան (3), կարկաչ-ն (4) գետերով, զվար- (5), սառնորակ աղբյուրներով, որոտ-նդոստ (6) ջրվեժների շառաչ-նով (7): Լուրթ երկնքում թևածում էին սիգապան- (8) արծիվները, վարդի թ-ուտներում (9) թռչուններն էին ճռվողում, մեղուները բ-ալով (10) թռչում էին ծաղկից ծաղիկ:

1) 1 - ր, 2 - ռ, 3 - ր, 4 - ու, 5 - թ, 6 - -, 7 - յու, 8 - ծ, 9 - պ, 10 - qq
2) 1 - րր, 2 - ր, 3 - ռ, 4 - ու, 5 - դ, 6 - ը, 7 - յու, 8 - ծ, 9 - փ, 10 - qq
3) 1 - ր, 2 - ր, 3 - ռ, 4 - յու, 5 - թ, 6 - ը, 7 - ու, 8 - ձ, 9 - փ, 10 - q
4) 1 - ր, 2 - ր, 3 - ռ, 4 - ու, 5 - թ, 6 - ը, 7 - յու, 8 - ծ, 9 - փ, 10 - qq

47 **Ո՞ր շարքում միասին, անջատ, գծիկով գրության սխալ *չկա.***

1) ժամ առ ժամ, բերդ-քաղաք, առայժմ, ՀՀ-ից
2) լանջն ի վեր, ծակուծուկ, հայ-ռուսերեն, չորսից-հինգ
3) պատմաբանասիրական, դեմ-դիմաց, Տեր-Գրիգորյան, 10-ից
4) այսօր-վաղը, հինգ հարյուրամյա, ի մի բերել, ինչ-որ բան

48 **Ո՞ր շարքում մեծատառի գրության սխալ կա.**

1) Մարոկկոյի Թագավորություն, Դեղին ծով, Արևելյան Եփրատ
2) Շապուհ երկրորդ Երկարակյաց, Մխիթար Հերացի, Խաչակրաց արշավանքներ
3) Մամիկոնյան տիկին, Անգլիայի Համայնքների պալատ, Բազե Առաքել
4) Իսրայելի Պետություն, Սարգիս Պիծակ, Գողթան գավառ

49 **Հոմանիշների քանի՞ զույգ կարող է կազմվել տրված բառացանկից.**

անթաքույց, սեթևեթել, վեհանձն, պճնվել, բացահայտ, ճաշկերույթ, հեղհեղուկ, հրավերք, տմարդի, հեղեղատ:

1) ոչ մի
2) երեք
3) երկու
4) մեկ

50 **Ո՞ր տարբերակում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն կա:**

1) ***օձիքը բռնել*** – համառորեն պահանջել, ***գլուխը ցավեցնել*** – ձանձրացնել
2) ***ոտքի հանել*** – դրդել ըմբոստանալու, ***պոչը քաշել*** – մի բանից հրաժարվել
3) ***տակն ու վրա անել*** – ասվածը սխալ հասկանալ, ***ուրիշի երգը երգել*** – սեփական կարծիք չունենալ
4) ***հալած յուղի տեղ դնել*** – անվերապահորեն հավատալ, ***ականջը գցել*** – մեկին ինչ-որ բան հաղորդել

51 **Ո՞ր շարքի բոլոր բառերն ունեն - *ական* վերջածանց.**

1) փչան, բաժանորդ, անվարան, ձգան
2) դերձան, խարազան, շարան, անարժան
3) ավազան, շրջանային, հորան, զարմանալի
4) խարան, խուժան, զորակայան, սուտասան

52 **Ո՞ր տարբերակի ընդգծված բառերն են համանուններ:**

1) **շրջել** – շուռ տալ, **շրջել** – զբոսնել, շրջագայել
2) **թափանցիկ** – վճիտ, ջինջ, **թափանցիկ** – իր միջով լույս անցկացնող
3) **զուր** – անտեղի, ավելորդ, **զուր** – ապարդյուն
4) **լսել** – ունկնդրել, ականջ դնել, **լսել** – որևէ հարց քննարկել

53 **Ո՞ր նախադասության մեջ կա հարաբերական դերանուն (նախադասությունները կետադրված չեն):**

1) Ես ինչպես կարող եմ սխալներդ անընդհատ ներել հուսալ որ կփոխվես ճիշտ վարքով կապրես:
2) Հետո մենք ինչքան սպասեցինք մի լավ առիթի:
3) Ինչպես ինքս պոկեմ ինձ քեզնից ու վեր կենամ գնամ:
4) Ինչքան խոսեցինք գրականությունից այնքան վեճը թեժացավ:

54 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *ա* ներքին հոլովման:**

1) եռանկյուն, կորյուն, հեռագրատուն, շուն
2) սյուն, շարժում, տուն, ուրախություն
3) գարուն, խաբեություն, հայրանուն, շարասյուն
4) արյուն, անկյուն, անուն, քավություն

55 **Ո՞ր նախադասության մեջ կրկնադիր շաղկապ կա (նախադասությունները կետադրված չեն):**

1) Ինձ պատմել են որ այնտեղ էլ ոչ մի չարխ չի պտտվում ոչ մի կուժ չի շինվում:
2) Ծով կար նրա մտքում և այդ ծովը ափ էր շպրտում մերթ սև թավիշե գլխարկով մի գլուխ մազերը կարճ կտրած մերթ երկարազգեստ մի կնոջ թիկունքին երկար ծամեր:
3) Կարծում էր կգրի մի կարճ պատմվածք կամ մի ակնարկ կամ էլ որոշ ժամանակով գրելը կհետաձգի մինչև բավարար նյութ կհավաքվի ավելի ծավալուն գործի համար:
4) Աշնան խաղաղ օրերին նրան հաճելի էին և սիմինդրի տերևների խշշոցը և վազերի օրորը և հնձանի դռնակի երգը:

56 **Տրված հատվածի առանձնացված բառերի ձևաբանական վերլուծության տարբերակներից որո՞ւմ սխալ կա:**

Բացված է արդեն մի ուրիշ երկիր,
Ես այստեղ եմ, բայց ուրիշ եմ հիմա,
Ոսկի հայացքով կախարդել է նա,
Այլ սիրով լցրել հոգիս վշտակիր….

1) **հայացքով** – հասարակ գոյական, գործիական հոլով, **կախարդել է** – բայ, անցյալ ժամանակ
2) **այլ** – անորոշ դերանուն, **լցրել** – անորոշ դերբայ, ներգործական սեռ
3) **բացված** – հարակատար դերբայ, չեզոք սեռ, **ուրիշ** – անորոշ դերանուն
4) **բայց** – համադասական շաղկապ, **հիմա** – ժամանակի մակբայ

57 **Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը չափի պարագա:**

1) Այդ օրից **շատ** տարիներ էին անցել:
2) Աշնանամուտին գետակները **շատ** են բարակում:
3) **Ինչքա՜ն** ցավ եմ տեսել ես…
4) Հասուն ծառն ունի ձեռքի **ափի չափ** տերևներ:

58 **Ո՞ր նախադասության մեջ ընդգծվածը դերբայական դարձված *չէ* (նախադասությունները կետադրված չեն):**

1) **Շքեղ հագնված** հյուրերը կարծես չէին էլ նկատում տանտիրոջ անհանգստությունը:
2) Դահլիճը **քար կտրած** սպասում էր երգչի հայտնվելուն:
3) Պատերազմից հետո մենք մուրացկանների նման **ձեռքներս անցորդներին պարզած** կանգնել էինք եկեղեցու նախշազարդ դռան մոտ:
4) Հիվանդի ոտքերի կողմում **ձեռքերը կրծքին ծալած** կանգնած էր արտիստը:

59 **Ո՞ր տարբերակում հատկացուցիչ ստորադաս նախադասություն կա:**

1) Այս գավաթը նրանն է, ով հաղթանակ կտանի սրամարտում:
2) Մեզ վաղուց էին պատմել նրա մասին, ով բազում քաջագործություններ էր կատարել և ազատել երկիրը թշնամիներից:
3) Մառախուղն ինձ թաքցրեց նրանց աչքից, ովքեր արդեն շուրջ երեք օր կրնկակոխ հետևում էին ինձ:
4) Մուշեղը մտավ այն արհեստանոցը, որ գտնվում էր քաղաքի կենտրոնական շուկայում:

60 **Ո՞ր տարբերակում է բարդ ստորադասական նախադասությունը սխալ փոխակերպված պարզի:**

1) *Թումանյանի հոբելյանը մի սովորական հանդես չէր, որ հետևյալ օրն իսկ մոռացվում է:*
   Թումանյանի հոբելյանը հետևյալ օրն իսկ մոռացվող մի սովորական հանդես չէր:
2) *Ովքեր մտերմություն էին անում Զորյանի հետ, գիտեին նրա նրբազգաց բնավորությունը:*
   Զորյանի հետ մտերմություն անողները գիտեին նրա նրբազգաց բնավորությունը:
3) *Ճանաչեց ինձ, նույնիսկ հիշեց իր խորհուրդը, որ տվել էր ինձ՝ սովորել, բարձրա–գույն կրթություն ստանալ:*
   Ճանաչեց ինձ, նույնիսկ հիշեց սովորելու, բարձրագույն կրթություն ստանալու մասին ինձ իր տված խորհուրդը:
4) *Կարդում էր հանդարտ, մի այնպիսի ջերմությամբ, որ աննկատելի նվաճում էր ընթերցողին:*
   Կարդում էր հանդարտ, ընթերցողին աննկատելի նվաճող մի ջերմությամբ:

61 **Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ *չկա:***

1) Այս տոնը բացառապես ժողովրդական բնույթ էր կրում. ոչ մի կազմակերպություն, ոչ մի միություն չէր ղեկավարում և տոնվում էր տարերայնորեն, ինքնաբուխ:
2) Հիմա թվում էր՝ մանրազնին քննել է ամեն ինչ և գործը հարթ կընթանա, բայց հոգու խորքում մի անորոշ կասկած կար, որ ինքն ուղղակի ի վիճակի չէ ճիշտ մտածելու:
3) Վաղուց ի վեր նրան հետաքրքրում էր մի հարց, թե ինչու են այնպես հեշտ հայտնաբերվում ու մերկացվում շատ հանցագործություններ ու այնպես պարզորոշ են լինում շատ ոճրագործությունների հետքերը:
4) Նրա համար ամենքը հավասար էին, և բոլորի հետ վարվում էր անխտիր միևնույն մտերմիկ պարզությամբ ու հանապազօրյա անմիջականությամբ:

62 **Պարույր Սևակի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

Ով սահմանում է նոր օրենք ու կարգ,
Հայտարարվում է և օրենքից դուրս:
Բայց չե՞ն վախենում նրանք չար մահից.
Ապրում են դժվար ու մեռնում են հեշտ...

1) «Եվ այր մի՝ Մաշտոց անուն»
2) «Մարդ էլ կա, մարդ էլ»
3) «Առաջադրանք համայն աշխարհի հաշվիչ մեքենաներին և ճշգրիտ սարքերին»
4) «Վարք մեծաց»

63 **Գրական ո՞ր ուղղության բնորոշ գծերն են՝**

- Հռչակում է գրողի ստեղծագործական ազատության սկզբունքը:
- Պատկերելով կյանքի արատները՝ դրանց հակադրում է իր իդեալը՝ ստեղծելով գաղափարական հերոսներ:

1) ռոմանտիզմի
2) կլասիցիզմի
3) սիմվոլիզմի
4) ռեալիզմի

64 **Բառերից քանիսի՞ երկրորդ արմատում հնչյունափոխություն կա.**

թռչնաբուծարան, ալեծփուն, տղամարդկային, գնահատել, պատասխանատվություն, ջրածնային, նկարագրություն, դասացուցակ, մանկապատանեկան, ցուցափեղկ, ուղենշային:

65 **Բառերից քանի՞սն են բարդածանցավոր.**

ազնվաշուք, ակնածանք, չարաղետ, այլադավան, բազմաքանակ, դասալիք, ակնահաճո, առաջնեկ, արևածաղիկ, բերքատու:

66 **Միայն արևմտահայերենին բնորոշ քանի՞ բառ կամ բառաձև կա տրված հատվածում:**

Հավատարիմ ըզքեզ ես միշտ կը կարծեմ,
Ըլլաս կյանքիս կամ մահվանս տիրուհին.
Քանզի մահես վերջն ալ սերըդ պիտի լսեմ.
Երկու աչքերդ պիտի սպանեն զիս մեկեն:

67 **Նշել այն հատվածների համարները, որոնցում մեկից ավելի չեզոք սեռի բայեր կան:**

1. Մշուշների շղարշի տակ
   Աշնան խաշամն է խշխշում,
   Քամու ձեռքերն անհամարձակ
   Ամպի փեշերն են քաշքշում:
2. Որքան ինձնից հեռացել,
   Դուք ինձ միշտ եղել եք մոտիկ,
   Մարդի՛կ, ինձ շատ եք չարչարել,
   Բայց էլի դուք լավն եք, մարդի՛կ:
3. Ոտքիս տակ մի մեծ սար է սարսռում,
   Եվ գլխիս վերև երկինք է մի մեծ,
   Տիեզերքն իմ մեջ իրեն է փնտրում,
   Եվ զրնգում է տիեզերքն իմ մեջ:
4. Կիսարթուն քամին կտուրից թռչում,
   Ցանկապատին էր հենում կռնակը,
   Անթեղի վրա կատուն էր ննջում,
   Իսկ անթեղի տակ՝ հոգնած կրակը:

68 **Նշել նախադասության անդամների շարահյուսական վերլուծության ճիշտ տարբերակների համարները:**

Պոլսից հետո, որտեղ երկրորդ ձերբակալումից Զոհրապը մի կերպ էր գլուխն ազատել, Փարիզում կյանքը նոր իմաստ էր ստացել քառասունյոթամյա գրողի համար. հիմա նա վերջապես զգում էր ապրելու հրճվանքը:

1. **կյանքը** – ուղիղ խնդիր, **քառասունյոթամյա** – որոշիչ
2. **զգում էր** – պարզ ստորոգյալ, **հրճվանքը** – ուղիղ խնդիր
3. **որտեղ** – տեղի պարագա, **երկրորդ** – որոշիչ
4. **ձերբակալումից** - անջատման անուղղակի խնդիր, **մի կերպ** – ձևի պարագա
5. **հիմա** – ժամանակի պարագա, **նա** – ենթակա

69 **Նշել թվերը՝ ըստ Միսաք Մեծարենցի «Աքասիաներու շուքին տակ» բանաստեղծության տների ճիշտ հաջորդականության:**

1. Ջուրը ցայտքեն ծաղիկ-ծաղիկ կը կաթե.
   Վրճիտ, ինչպես լույսե արցունքը մանկան,
   Նրվագն անոր կը հեծեծե հեշտական:
2. Աքասիաներ՝ գինով լույսե ու տապե,
   Օրորվելով մաքուր շունչ մը կը հևան.
   Մինչ կը ձյունե ծաղիկն իրենց հոտևան,
   Ջոր խոլաբար հովը գրկել կը շտապե:
3. Ու լույսն անոնց՝ անխոս հուրի՜ դյութական,
   Հրմայագեղ ու վարսքերով արծաթե,
   Շատրրվանին կ՚իջնե գուռին մեջ կաթե:
4. Ծաղիկներեն հուշիկ թերթեր կը թափե
   Բուրումներով օծուն հովիկն իրիկվան,
   Հոգիներուն կ՚իջնե երազ մը բուրյան,
   Ի՜նչ հեշտին է մրթնշաղն այս սատափե:

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Անուղղակի խնդիրները կարող են արտահայտվել ոչ միայն տարբեր հոլովաձևերով, այլև կապային կառույցներով:
2. Ուղիղ խնդրի պաշտոնով կարող են հանդես գալ նյութական իմաստ արտահայտող բոլոր խոսքի մասերը:
3. Վերաբերության խնդիրը արտահայտվում է միայն կապային կապակցությամբ:
4. Ներգործող անուղղակի խնդիրը դրվում է միայն բացառական հոլովով:
5. ***Նվիրել, հանձնել, տալ*** բայերը կարող են միաժամանակ ունենալ թե՛ ուղիղ, թե՛ հանգման անուղղակի խնդիր:
6. Ներգործող խնդիրը դրվում է ներգործական սեռի բայերի պահանջով: